Զեկուցողը ներկայացրեց Տարրական դասարանների մեթոդախաղըման նախորդ նիստի օրակարգի կատարողականը, ամփոփեց նախորդ նիստի արդյունքները, անդրադարձավ կատարված աշխատանքներին և նշեց, որ նախատեսված աշխատանքները և որոշումները կատարվել են պատշաճ, սահմանված ժամկետներում:

**Արտահայտվեցին՝
Որոշեցին՝**

Ընդունել ի գիտություն Տարրական դասարանների մեթոդախաղըման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը:

Լսեցին 3.

Քննական առարկաների հետ կապված հարցերի քննարկման մասին հարցը:
(գեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը կարևորեց, որ ժամանակին մեկնարկեն Տարրական դասարանների մեթոդափափորումում ընդգրկված «Մաթեմատիկա» և «Մայրենի» առարկաների քննական տոմսերի կազմման աշխատանքները, որոնք պետք է լինեն չափորոշչային պահանջներին ու ԳԹԿ-ի կողմից սահմանված պահանջներին համապատասխան: Զեկուցողը նշեց նաև, որ առաջիկայում հաստատվելու են քննական առարկաների խորհրդատվությունների ժամանակացույցերը:

Արտահայտվեցին՝

Կ. Մալխասյանը, Ա. Աղաբեկյանը, Ն. Գալստյանը
Արտահայտվողները նշեցին, որ անհրաժեշտ է բավարար ժամանակ հատկացնել տարեվերջյան կրկնություններին և թեմաների ամփոփումներին, ինչը կնպաստի ավարտական քննությունները սահմանված կարգով, պատշաճ մակարդակով անցկացնելուն:

Որոշեցին՝

Կազմել 4-րդ դասարանների գիտելիքների հարցաշարերը, հարցատոմսերը, հավանության արժանացնել ՄՄ նիստում և ներկայացնել տնօրենին հաստատման:

Լսեցին 4.

Գնահատման համակարգի փոփոխության քննարկման մասին հարցը:
(գեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը նշեց, որ ԿԳՄՍ նախարարի համաձայն այսուհետ կիսամյակային գրավոր աշխատանքներ չեն լինելու և աշակերտների կիսամյակային գնահատականը ձևավորվելու է ընթացիկ, թեմատիկ գրավոր աշխատանքներից, գործնական աշխատանքներից ստացած գնահատականների հիման վրա:

Արտահայտվեցին՝

ՄՄ անդամները
Արտահայտվողները ողջունեցին որոշումը, նշեցին, որ այս սկզբունքով կիսամյակն ամփոփելու դեպքում աշակերտի կիսամյակային գնահատականը կախված չի լինի մեկ գնահատականից՝ կիսամյակայինից, այլ հաշվի կառնվեն ուսուցման ընթացքում նշանակված բոլոր գնահատականները:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն գնահատման համակարգի փոփոխությունը:

Լսեցին 5.

1-4-րդ դասարաններում «Մայրենի» առարկայի դրվածքը ուսումնասիրության մասին հարցը:

(գեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը նշեց, որ տարրական դասարաններում «Մայրենի» առարկայի կարևոր նպատակներից է համարվում այն, որ սովորողն առաջին դասարանից սկսած սովորի ընկալել կարդացածը կատարել հետևություններ, վերլուծել ընթերցածը, կարդացածի շուրջ կատարել հարցադրումներ: Զեկուցողը կարևորեց, որ «Մայրենի» առարկայի դասերի ընթացքում ուսուցիչները կարողանան հասնել նրան, որ աշակերտների գիտելիքները լինեն կայուն, գրավոր և բանավոր խոսքը լինի մաքուր հայերենով: Զեկուցողը կարևոր համարեց նաև այն, որ աշակերտների մոտ ձևավորվի սահուն և հասկանալով կարդալու ունակություն, որը կօգնի աշակերտներին պատշաճ ընկալել նաև մյուս առարկաների ուսումնական նյութը:

Արտահայտվեցին՝

ՄՄ անդամները
Արտահայտվողները ողջունեցին առաջարկը:

Որոշեցին՝

1-4-րդ դասարաններում իրականացնել «Մայրենի» առարկայի դրվածքի ուսումնասիրություն և հաշվի առնելով գարնանային արձակուրդներն այն իրականացնել մինչև ապրիլ ամիսը:

- Լսեցին 6.** 2021-2022 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի ընթացքում տնօրենության կողմից գրավոր աշխատանքների կազմակերպման մասին հարցը:
- (զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
- Զեկուցողը նշեց, որ տնօրենության գրավորները կարելի է համարել ուսուցիչների կողմից իրականացված աշխատանքների ստուգատես, որի միջոցով ստուգվում են նրանց կողմից փոխանցված և աշակերտների կողմից ընկալված գիտելիքները:
- Արտահայտվեցին՝** ՄՄ անդամները
Արտահայտվողները նշեցին, որ աշակերտներն արդեն իսկ ծանոթ են գրավոր աշխատանքների սկզբունքին:
- Որոշեցին՝** 2021-2022 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի տնօրենության կողմից գրավոր աշխատանքները կազմակերպել մինչև գարնանային արձակուրդները:
- Լսեցին 7.** Օրացուցային-թեմատիկ պլանների մեջ տնօրենության կողմից տրվող գրավոր աշխատանքների հետ կապված փոփոխությունների մասին հարցը:
- (զեկուցող՝ Ռ. Շալունց)
- Զեկուցողը նշեց, որ տնօրենության կողմից գրավոր աշխատանքների տրման հետ կապված օրացուցային-թեմատիկ աշխատանքներում կարող է առաջանալ օրերի փոփոխության անհրաժեշտություն: Առաջարկեց թեմատիկ գրավոր աշխատանքների օրերն ըստ անհրաժեշտության փոխարինել տնօրենության գրավոր աշխատանքների օրերով և ըստ անհրաժեշտության իրականացնել թեմաների հաջորդականության փոփոխություն:
- Արտահայտվեցին՝** ՄՄ անդամները
Արտահայտվողները նշեցին, որ զեկուցողի կողմից առաջարկվող սկզբունքը ճիշտ է, կարելի է այդ սկզբունքով աշխատել:
- Որոշեցին՝** Թեմատիկ գրավոր աշխատանքների օրերն ըստ անհրաժեշտության փոխարինել տնօրենության գրավոր աշխատանքների օրերով և ըստ անհրաժեշտության իրականացնել թեմաների հաջորդականության փոփոխություն:
- Լսեցին 8.** Առնո Բաբաջանյանի ծննդյան օրվա կապակցությամբ միջոցառման կազմակերպման մասին հարցը:
- (զեկուցող՝ Թ. Հովհաննիսյան)
- Զեկուցողը նշեց, որ ցանկանում է կազմակերպել Առնո Բաբաջանյանի ծննդյան օրվա կապակցությամբ միջոցառում, շեշտեց, որ միջոցառմանը կմասնակցեն դպրոցի տարբեր դասարանների աշակերտներ, այդ թվում՝ 2-4-րդ դասարանների աշակերտները:
- Արտահայտվեցին՝** ՄՄ անդամները
Արտահայտվողները ողջունեցին որոշումը:
- Որոշեցին՝** Առնո Բաբաջանյանի ծննդյան օրվա կապակցությամբ միջոցառումն իրականացնել մարտի 11-ին:
- Լսեցին 9.** Սպորտլանդիայի քաղաքային փուլին մասնակցություն:
- (զեկուցող՝ Ա. Աբգարյան)
- Զեկուցողը նշեց, որ սպորտլանդիայի քաղաքային փուլին մասնակցելու համար 4-6-րդ դասարանների աշակերտների միջև կկազմակերպվի դպրոցական փուլ, որին կմասնակցեն «Առյուծներ» և «Արծիվներ» թիմերը, իսկ հաղթող թիմը կմասնակցի սպորտլանդիայի քաղաքային փուլին՝ «Փյունիկ» անունով:
- Արտահայտվեցին՝** ՄՄ անդամները
Արտահայտվողները հաջողություն մաղթեցին դպրոցի թիմին:

Որոշեցին՝

Սպորտլանդիայի քաղաքային փուլին մասնակցել 1 մասնական թիմով՝
«Փյունիկ» անունով:

Մ/Մ նախագահ՝ _____

Ռ. Շալունց

Ուսումնական զծով փոխտնօրեն՝ _____

Ս. Ավանեսյան

**«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N° 9**

«20» ապրիլի 2022թ.

ք. Գորիս

Նիստին ներկա էին «Տարրական դասարանների մեթոդիավորման» բոլոր անդամները:

Նիստին ներկա էր ուսումնական զծով փոխտնօրեն Ս. Ավանեսյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Տարրական դասարանների մեթոդիավորման նիստի օրակարգի հաստատում: (զեկուցող՝ Ռ. Շալունց)
2. Հաղորդում Տարրական դասարանների մեթոդիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին: (զեկուցող՝ Ռ. Շալունց)
3. Օրացուցային-թեմատիկ պլաններում կիսամյակային գրավոր աշխատանքների չեղարկման հետ կապված փոփոխությունների քննարկում: (զեկուցող՝ Ռ. Շալունց)
4. Էլեկտրոնային մատենավարության ստուգում: (զեկուցող՝ Ռ. Շալունց)
5. Մնացորդային գիտելիքների ստուգման գրավոր աշխատանքների քննարկում: (զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
6. «Դաստիարակչական մեթոդների կիրառումը տարրական դասարաններում» թեմայով զեկույց: (զեկուցող՝ Ա. Դոլունց)

Լսեցին 1. Տարրական դասարանների մեթոդիավորման նիստի օրակարգի հաստատման մասին հարցը: (զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

**Արտահայտվեցին՝
Որոշեցին՝**

Հաստատել 2021-2022 ուսումնական տարվա Տարրական դասարանների մեթոդիավորման 9-րդ նիստի օրակարգը:

Լսեցին 2. Հաղորդում՝ Տարրական դասարանների մեթոդիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին: (զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը ներկայացրեց Տարրական դասարանների մեթոդիավորման նախորդ նիստի օրակարգի կատարողականը, ամփոփեց նախորդ նիստի արդյունքները, անդրադարձավ կատարված աշխատանքներին և նշեց, որ նախատեսված աշխատանքները և որոշումները կատարվել են պատշաճ, սահմանված ժամկետներում:

**Արտահայտվեցին՝
Որոշեցին՝**

Ընդունել ի գիտություն Տարրական դասարանների մեթոդիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը:

Լսեցին 3. Օրացուցային-թեմատիկ պլաններում կիսամյակային գրավոր աշխատանքների չեղարկման հետ կապված փոփոխությունների քննարկման մասին հարցը: (զեկուցող՝ Ռ. Շալունց)

Ձեկուցողը ներկայացրեց փոփոխությունները, շեշտեց այն դեպքերը, երբ աշակերտը պետք է գրի ամփոփիչ աշխատանք: Ձեկուցողը նշեց, որ այն աշակերտները, ովքեր բացակայում են կիսամյակի ընթացքում տրվող թեմատիկ գրավոր աշխատանքների կեսից ավելիից, պետք է գրեն ամփոփիչ գրավոր աշխատանք, որն իր մեջ ներառում է բացակայած աշխատանքների բովանդակությունը, իսկ որևէ թեմատիկ գրավոր աշխատանքից բացակայած աշակերտը պետք է մինչև կիսամյակի ավարտը գրի այդ աշխատանքը:

Արտահայտվեցին՝

ՄՄ անդամները

2-րդ դասարանների դասավարները նշեցին, որ կիսամյակային աշխատանքի փոխարեն իրականացնել բանավոր հարցում: 3-րդ դասարանների դասավարները նշեցին, որ նույնպես ամփոփումը կիրականացնեն բանավոր հարցման միջոցով: 4-րդ դասարանների դասավարները նշեցին, որ կիսամյակը կավարտեն բանավոր հարցման միջոցով, սակայն շեշտեցին, որ 4-րդ դասարանում իրականացվում է գիտելիքների ստուգում, ինչը կարելի է համարել կիսամյակի ամփոփման լավագույն տարբերակներից մեկը:

Որոշեցին՝

2-4-րդ դասարաններում կիսամյակային գրավոր աշխատանքները փոխարինել բանավոր հարցմամբ:

Լսեցին 4.

Էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին հարցը:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Ձեկուցողը ներկայացրեց էլեկտրոնային մատյաններում արդեն իսկ արձանագրված թերություններն ու անհամապատասխանությունները:

Արտահայտվեցին՝

Ս. Ավանեսյան:

Արտահայտվողը նշեց, որ անհրաժեշտ է հետևել տրված ցուցումներին և գրանցումներն ու գնահատումը կատարել ժամանակին:

Որոշեցին՝

Ստուգման արդյունքներն ընդունել ի գիտություն: ՄՄ նախագահի կողմից կատարել էլեկտրոնային մատենավարության պարտադիր կատարողականի վերահսկում, հարցերը քննարկել ուսումնական գծով փոխտնօրեն Սերգեյ Ավանեսյանի հետ:

Լսեցին 5.

Մնացորդային գիտելիքների ստուգման գրավոր աշխատանքների քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Ձեկուցողն առաջարկեց իրականացնել մնացորդային գիտելիքների ստուգում՝ թեստային աշխատանքների միջոցով՝ «Մայրենի» և «Մաթեմատիկա» առարկաներից: Ձեկուցողն առաջարկեց թեստերը կազմել նախորդ տարիների անցած նյութից. 2-րդ դասարաններում՝ 1-ին կիսամյակի նյութից, 3 դասարաններում՝ 2-րդ դասարանի նյութից, 4-րդ դասարաններում՝ 2-3-րդ դասարանների նյութից:

Արտահայտվեցին՝

ՄՄ անդամները

Արտահայտվողները նշեցին, որ հետաքրքիր մոտեցում է և իրենց նույնպես հետաքրքրված են, որպեսզի պարզեն նախորդ տարիների աշակերտների գիտելիքները որքանով են մնալուն:

Որոշեցին՝

Մնացորդային գիտելիքների ստուգման համար թեստերը կազմել հետևյալ սկզբունքով. 2-րդ դասարաններում՝ 1-ին կիսամյակի նյութից, 3 դասարաններում՝ 2-րդ դասարանի նյութից, 4-րդ դասարաններում՝ 2-3-րդ դասարանների նյութից:

Լսեցին 6.

«Դաստիարակչական մեթոդների կիրառումը տարրական դասարաններում» թեմայով զեկույց:

(զեկուցող՝ Ա. Դոլունց)

Զեկուցողը ներկայացրեց «Դաստիարակչական մեթոդների կիրառումը տարրական դասարաններում» թեմայով զեկույցը:

*Արտահայտվեցին՝
Որոշեցին՝*

Ընդունել ի գիտություն «Դաստիարակչական մեթոդների կիրառումը տարրական դասարաններում» թեմայով զեկույցը:

Մ/Մ նախագահ՝

Ռ. Շալունց

Ուսումնական գծով փոխտնօրեն՝

Ս. Ավանեսյան

**«ԳՈՐԻՄԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N° 10**

«11» մայիսի 2022թ.

ք. Գորիս

Նիստին ներկա էին «Տարրական դասարանների մեթոդիավորման» բոլոր անդամները:

Նիստին ներկա էր փոխտնօրեն Սերգեյ Ավանեսյանը

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. «Տարրական դասարանների մեթոդիավորման» նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
2. Հաղորդում՝ «Տարրական դասարանների մեթոդիավորման» նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
3. 4-րդ դասարանների գիտելիքների ստուգման հանձնաժողովների կազմի քննարկում և հաստատում:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
4. 4-րդ դասարանների գիտելիքների ստուգման քննական տոմսերի, քննությունների ժամանակացույցի քննարկում և հաստատում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
5. 2021-2022 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի տնօրենության կողմից տրված գրավոր աշխատանքների արդյունքների քննարկում:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
6. 1-4-րդ դասարանների առարկայական ծրագրերի կատարողականի ստուգում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
7. 1-4-րդ դասարաններում ընթերցանություն:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
8. «Չափորոշային պահանջների իրականացումը «Մաթեմատիկա» առարկայից՝ 4-րդ դասարանում» թեմայով զեկույց:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
9. 1-4-րդ դասարաններում «Մայրենի» առարկայի դրվածքի ուսումնասիրության արդյունքների ամփոփում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Լսեցին 1. «Տարրական դասարանների մեթոդիավորման» նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

**Արտահայտվեցին՝
Որոշեցին՝**

Հաստատել 2021-2022 ուսումնական տարվա Տարրական դասարանների մեթոդիավորման 10-րդ նիստի օրակարգը:

Լսեցին 2. Հաղորդում՝ «Տարրական դասարանների մեթոդիավորման» նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը ներկայացրեց «Տարրական դասարանների մեթոդիավորման» նախորդ նիստի օրակարգի կատարողականը, ամփոփեց նախորդ նիստի արդյունքները, անդրադարձավ կատարված աշխատանքներին և նշեց, որ նախատեսված աշխատանքները և որոշումները կատարվել են պատշաճ, սահմանված ժամկետներում:

**Արտահայտվեցին՝
Որոշեցին՝**

Ընդունել ի գիտություն «Տարրական դասարանների մեթոդավորման» նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը:

Լսեցին 3.

4-րդ դասարանների գիտելիքների ստուգման հանձնաժողովների կազմի քննարկման և հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը ներկայացրեց 4-րդ դասարանների գիտելիքների ստուգման հանձնաժողովների կազմերը, նշեց, որ կազմի անդամներն ընտրվել են հիմք ընդունելով հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգը:

**Արտահայտվեցին՝
Որոշեցին՝**

1. Գիտելիքների ստուգումը կազմակերպելու համար տնօրենի կողմից ներկայացուցիչներ նշանակել տնօրեն Դավիթ Կոստանյանին, փոխտնօրեններ Սերգեյ Ավանեսյանին ու Աիդա Անտոնյանին:
2. Հաստատել 4-րդ դասարանների գիտելիքների ստուգման հանձնաժողովների կազմերը (կցվում է):

Լսեցին 4.

4-րդ դասարանի աշակերտների գիտելիքների ստուգման հարցատոմսերի քննարկման, հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը նշեց, որ «Մայրենի» առարկայի թեստը պարունակում է տասը առաջադրանք, յուրաքանչյուր առաջադրանքի և ենթաառաջադրանքի ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր: Թեստի առավելագույն միավորը 15 է, թեստի կատարմանը հատկացվում է 60 րոպե: «Մաթեմատիկա» առարկայի թեստը կազմված է տասնյոթ առաջադրանքից: 1-ից 15 առաջադրանքներին տրվում է 1 միավոր, 16-րդ առաջադրանքին՝ 2 միավոր, 17-րդ առաջադրանքին՝ 3 միավոր: Թեստի առավելագույն միավորը 20 է: Թեստի կատարմանը հատկացվում է 60 րոպե: Զեկուցողը հավելեց, որ տարրական դասարանների մեթոդավորումը հիմք ընդունելով ԳԹԿ-ի կողմից մշակված նմուշները՝ կազմել է առնվազն չորս տարբերակ «Մայրենի» և «Մաթեմատիկա» առարկաներից:

Արտահայտվեցին՝

Ս. Ավանեսյանը

Արտահայտվողը հավանություն տվեց 4-րդ դասարանի աշակերտների «Մայրենի» և «Մաթեմատիկա» առարկաներից գիտելիքների ստուգման հարցատոմսերին:

Որոշեցին՝

Հաստատել 4-րդ դասարանի աշակերտների գիտելիքների ստուգման հարցատոմսերը (կցվում է):

Լսեցին 5.

2021-2022 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի տնօրենության կողմից տրված գրավոր աշխատանքների արդյունքների քննարկման մասին հարցը:

(զեկուցող Ս. Ավանեսյան)

Զեկուցողը նշեց, որ 2022-2023 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ընթացքում «Մայրենի», «Մաթեմատիկա» առարկայից տնօրենության կողմից գրավոր աշխատանք են գրել 1-4-րդ դասարանների բոլոր աշակերտները. «Մայրենի» առարկայից տրվել է թելադրություն՝ առաջադրանքներով, իսկ «Մաթեմատիկա» առարկայից թեստային աշխատանք:

Արտահայտվեցին՝

Ռ. Շալունցը

Շալունքը նշեց, որ անհրաժեշտ է ուսուցողական և թեմատիկ գրավոր աշխատանքներն անցկացնել չափորոշչահեն ուսուցման սկզբունքներով, տնօրինության կողմից տրվող աշխատանքների նմանությամբ, որը թույլ կտա աշակերտներին ավելի հեշտությամբ և առանց լարվածության մասնակցել գրավոր աշխատանքին:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն 2021-2022 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի տնօրենության կողմից տրված գրավոր աշխատանքների արդյունքները **(կցվում է ամփոփագիրը):**

Լսեցին 6.

1-4-րդ դասարանների առարկայական ծրագրերի կատարողականի ստուգման մասին հարցը:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը նշեց, որ դիտարկումներ է իրականացրել բոլոր դասարաններում, որի արդյունքում եկել է եզրահանգման, որ ապահովված են բոլոր պահանջները: Զեկուցողը հավելեց, որ ոչ աշխատանքային օրերի հետ կապված օրացուցային-թեմատիկ պլաններում կատարվել են որոշակի փոփոխություններ, թեմաների տեղաբաշխումներ, որպեսզի ծրագրային նյութն ամբողջովին մատուցվի:

Արտահայտվեցին՝

ՄՄ անդամները

Արտահայտվողները նշեցին, որ ապահովվել է 1-ին դասարանում 30 շաբաթ, 2-րդում՝ 32 շաբաթ, իսկ 3-4-րդում 34 շաբաթ տևողությունը՝ համապատասխան ժամաքանակներով: Նշվեց, որ առարկաների կատարողականները ապահովվել են նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ շաբաթների տևողության մեջ 3 օր ավելացել է:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն 1-4-րդ դասարանների առարկայական ծրագրերի կատարողականի մասին ինֆորմացիան:

Լսեցին 7.

1-4-րդ դասարաններում ընթերցանության մասին հարցը:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը նշեց, որ իր կողմից ուսումնասիրություն է իրականացվել 1-4-րդ դասարաններում և դիտարկվել է աշակերտների ընթերցելու տեխնիկան: Նշվեց, որ 1-ին դասարանում ստուգվել է աշակերտների գրաձանաչության մակարդակը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ աշակերտները նոր են ավարտել այբբենարանը, իսկ 2-4-րդ դասարաններում իրականացվել է ընթերցանություն:

Արտահայտվեցին՝

ՄՄ անդամները

Արտահայտվողները նշեցին, որ ընթերցանության տեխնիկան ավելի լավարկելու նպատակով անհրաժեշտ են համարում հաճախակի իրականացնել ընթերցանության դասեր, կազմակերպել այցելություններ դպրոցի գրադարան, զարգացնելու աշակերտների շրջանում ընթերցելու մշակույթը:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն ընթերցանության մասին զեկույցը:

Լսեցին 8.

«Չափորոշչային պահանջների իրականացումը «Մաթեմատիկա» առարկայից՝ 4-րդ դասարանում» թեմայով զեկույց:

((զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը ներկայացրեց «Չափորոշչային պահանջների իրականացումը «Մաթեմատիկա» առարկայից՝ 4-րդ դասարանում » թեմայով զեկույցը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն «Չափորոշչային պահանջների իրականացումը «Մաթեմատիկա» առարկայից՝ 4-րդ դասարանում» թեմայով զեկույցը:

Լսեցին 9.

1-4-րդ դասարաններում «Մայրենի» առարկայի դրվածքի ուսումնասիրության արդյունքների ամփոփման մասին հարցը:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը ներկայացրեց նախորդող ժամանակահատվածում «Մայրենի» առարկայի դրվածքի ուսումնասիրության տվյալները: Նշեց, որ դիտարկման ժամանակահատվածում դասալսումներ, փոխադարձ դասալսումներ են իրականացվել դպրոցի 1-4-րդ դասարաններում, ինչպես նաև տվյալ մեթոդափափորման և դպրոցի մյուս մեթոդափափորումների անդամները մասնակցել են տվյալ առարկաների ցուցադրական դասերին, դասմիջոցառումներներին: Զեկուցողը նշեց, որ այս ընթացքում իրականացված բոլոր դասալսումներից հետո դասվող մասնագետի հետ դասալսողները քննարկել են արդյունքները և դրանց հիման վրա կազմվել են արձանագրություններ, ինչպես նաև իրականացված դասերն աշակերտակենտրոն էին:

Արտահայտվեցին՝

Գ. Ավագյանը, Ս. Ավանեսյանը

Արտահայտվողները նշեցին, որ կատարված վերլուծությունները, քննարկումները և դիտարկումները արդյունավետ էին այնքանով, որ հաջորդ դասալսումների ժամանակ նկատված վրիպումներն ու թերությունները մեծամասամբ ուղղված էին:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն «Մայրենի» առարկայի դրվածքի ուսումնասիրության արդյունքների մասին ինֆորմացիան և այն ներկայացնել նաև մանկավարժական խորհրդի նիստում:

Մ/Մ նախագահ՝

Ռ. Շալունց

Ուսումնական գծով փոխտնօրեն՝

Ս. Ավանեսյան

**«ԳՈՐԻՍԻ ՅՈՒՆ. ԲԱՆՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ՏԱՐԲԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N° 11**

«22» հունիսի 2022թ.

ք. Գորիս

Նիստին ներկա էին «Տարրական դասարանների մեթոդափափորման» բոլոր անդամները.

Նիստին ներկա էր փոխսնօրեն Սերգեյ Ավանեսյանը, ուսուցչի օգնական Արփինե Ծատրյանը

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. «Տարրական դասարանների մեթոդափափորման» նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
2. Հաղորդում՝ «Տարրական դասարանների մեթոդափափորման» նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
3. 4-րդ դասարանների գիտելիքների ստուգման արդյունքների ամփոփում:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
4. Էլեկտրոնային մատենավարության ամփոփիչ ստուգման արդյունքների քննարկում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
5. 2021-2022 ուսումնական տարվա ընթացքում իրականացված աշխատանքների հաշվետվությունների քննարկում:
(զեկուցողներ՝ ՄՄ անդամներ)
6. 2021-2022 ուսումնական տարվա ընթացքում իրականացված դասալուսման ամփոփում:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
7. ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ ուսումնական գործընթացի կազմակերպման արդյունքներն ու խնդիրները:
(զեկուցողներ՝ Ս. Ավանեսյան, Ա. Ծատրյան)
8. 2022-2023 ուսումնական տարվա նախնական դասաբաշխում:
(զեկուցողներ՝ Ս. Ավանեսյան, Ռ. Շալունց)

Լսեցին 1. «Տարրական դասարանների մեթոդափափորման» նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Ձեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

**Արտահայտվեցին՝
Որոշեցին՝**

Հաստատել 2021-2022 ուսումնական տարվա Տարրական դասարանների մեթոդափափորման 11-րդ նիստի օրակարգը:

Լսեցին 2. Հաղորդում՝ «Տարրական դասարանների մեթոդափափորման» նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Ձեկուցողը ներկայացրեց «Տարրական դասարանների մեթոդափափորման» նախորդ նիստի օրակարգի կատարողականը, ամփոփեց նախորդ նիստի արդյունքները, անդրադարձավ կատարված աշխատանքներին և նշեց, որ նախատեսված աշխատանքները և որոշումները կատարվել են պատշաճ, սահմանված ժամկետներում:

**Արտահայտվեցին՝
Որոշեցին՝**

Ընդունել ի գիտություն «Տարրական դասարանների մեթոդափափորման» նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը:

Լսեցին 3.

4-րդ դասարանների գիտելիքների ստուգման արդյունքների ամփոփման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը ներկայացրեց 4-րդ դասարանների գիտելիքների ստուգման ամփոփ նկարագիրը, նշեց, որ «Մայրենի» և «Մաթեմատիկա» առարկաներից իրականացվել է գիտելիքների ստուգում 4-րդ «Ա», «Բ» և «Գ» դասարաններում: Գիտելիքների ստուգմանը մասնակցել են տվյալ դասարանների բոլոր աշակերտները: Զեկուցողը հավելեց, որ արդյունքները գոհացուցիչ են:

Արտահայտվեցին՝

Ն. Գալստյանը, Ա. Աղաբեկյանը, Կ. Մալխասյանը
Արտահայտվողները կարևորեցին բացթողումների արձանագրումը, առաջացած խնդիրների շուրջ քննարկումները, նշեցին, որ 2022-2023 ուսումնական տարում գիտելիքների ստուգումը բարձր մակարդակով անցկացնելու համար պետք է միջոցներ ձեռնարկել աշակերտների պատրաստվածության մակարդակը բարձրացնելու, ստրեսակայունություն ձևավորելու ուղղությամբ:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն 4-րդ դասարանների գիտելիքների ստուգման արդյունքների ամփոփման մասին զեկուցումը (կցվում է ամփոփագիրը):

Լսեցին 4.

Էլեկտրոնային մատենավարության ամփոփիչ ստուգման արդյունքների քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Ռ. Շալունց)

Զեկուցողը նշեց, որ երկու կիսամյակների ընթացքում կատարված ստուգումները, ամենշաբաթյա վերահսկողությունը, փոխսփոխան Սերգեյ Ավանեսյանի կողմից աջակցությունը, քննարկումները և հարցերի պարզաբանումները փոփոխություններ են արձանագրել էլեկտրոնային մատենավարության հարցում:

Արտահայտվեցին՝

Ս. Ավանեսյանը
Որոշակի խնդիրներ կարելի է ասել հաղթահարվեցին՝ գրանցումներն ու գնահատումները կատարվեցին թեթևակի շեղումներով: Սակայն, որոշ շարունակում եմ թերություններով աշխատել, որոնք հիմնականում կապված են թեմաների ուշ լրացման, հաստատված ԹՊ-ներից որոշակի շեղումների հետ:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն 2021-2022 ուսումնական տարվա էլեկտրոնային մատենավարության վարման արդյունքները:

Լսեցին 5.

2021-2022 ուսումնական տարվա ընթացքում իրականացված աշխատանքների հաշվետվությունների քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ ՄՄ անդամներ)

Մեթոդիան նախագահը ներկայացրեց 2021-2022 ուսումնական տարվա ընթացքում կատարված աշխատանքները, արձանագրված հաջողություններն ու բացթողումները, ինչպես նաև ուսումնական տարվա սկզբում հաստատված ժամանակացույցին համապատասխան իրականացված և չիրականացված աշխատանքները:

Մեթոդիավորման անդամները ներկայացրին իրենց հաշվետվությունները, ուսումնական տարվա ընթացքում իրենց կողմից իրականացված աշխատանքները, ամփոփեցին արդյունքները: Ուսուցիչները մանրամասն ներկայացրեցին նաև ԿԱՊԿՈՒ և կանխարգելիչով աշակերտների հետ կատարված աշխատանքները:

Արտահայտվեցին՝

Ս. Ավանեսյանը
Սերգեյ Ավանեսյանը կարևորեց ծավալված քննարկումները և մեթոդիավորման նիստում հաշվետվությունների վերլուծությունը: Կարևորվեց նաև ԿԱՊԿՈՒ և կանխարգելիչով աշակերտների հետ կատարված աշխատանքների վերլուծությունը, ուսուցիչ, ուսուցչի օգնական կապը:

- Որոշեցին՝** Ընդունել ի գիտություն 2021-2022 ուսումնական տարվա ընթացքում մեթոդափափոխման անդամների կողմից իրականացված աշխատանքների հաշվետվությունների մասին զեկուցումը:
- Լսեցին 6.** 2021-2022 ուսումնական տարվա ընթացքում իրականացված դասալսումների ամփոփման մասին հարցը:
(զեկուցող՝ Ռ. Շալունց)
Զեկուցողը ներկայացրեց 2021-2022 ուսումնական տարվա ընթացքում իրականացված դասալսումների արդյունքները, կարևորեց քննարկված արձանագրությունների արդյունքները:
- Արտահայտվեցին՝** Սերգեյ Ավանեսյանը
Ավանեսյանը նշեց, որ դասալսումներն ու կազմակերպված քննարկումները օգնում են դասի արդյունավետության բարձրացմանը, թերությունների շտկմանը և փորձի փոխանակմանը:
- Որոշեցին՝** Ընդունել ի գիտություն 2021-2022 ուսումնական տարվա ընթացքում իրականացված դասալսումների արդյունքների ամփոփման մասին զեկուցումը (կցվում է ամփոփագիրը):
- Լսեցին 7.** ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ ուսումնական գործընթացի կազմակերպման արդյունքների ու խնդիրների մասին հարցը:
(զեկուցողներ՝ Ս. Ավանեսյան, Ա. Ծատրյան)
Զեկուցողները բոլորի ուշադրությունը հրավիրեցին ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ կատարված աշխատանքների վրա: Ծատրյանը ներկայացրեց երեխաներից որոշների մոտ առաջացած խնդիրները և կատարված աշխատանքները: Քննարկվեցին տարվա ընթացքում արձանագրված ձեռքբերումներն ու բացթողումները: Արփինե Ծատրյանը նշեց, որ ուսուցիչների կողմից պատշաճ լրացվել են ԿԱՊԿՈՒ աշակերտների ԱՌԴ-ները:
- Արտահայտվեցին՝** Անահիտ Աղաբեկյանը, Կարինե Մալխասյանը, Իրինա Ջավահիրյանը
Արտահայտվողները կարևորեցին ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ տարվող յուրաքանչյուր աշխատանք, նշեցին, որ այն պետք է լինի շարունակական:
- Որոշեցին՝** Ընդունել ի գիտություն ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ 2021-2022 ուսումնական տարվա ընթացքում ուսուցիչների կողմից իրականացված աշխատանքների մասին զեկուցումը:
- Լսեցին 8.** 2022-2023 ուսումնական տարվա նախնական դասաբաշխման մասին հարցը:
(զեկուցողներ՝ Ռ. Շալունց, Ս. Ավանեսյան)
Զեկուցողները նշեցին, որ ուսումնական պլանում փոփոխություններ չեն նախատեսվում և ժամաբա-անումը կարող է կատարվել հիմք ընդունելով 2021-2022 ուսումնական տարվա ուսումնական պլանը:
- Արտահայտվեցին՝** ՄՄ անդամները
Արտահայտվողները նշեցին, որ նախնական ժամաբաժանման հետ կապված չունեն առարկություններ, բոլոր աշխատանքներն իրականացվել են համագործակցային եղանակով, բոլոր ուսուցիչները միմյանց հետ քննակել են նախնական ժամաբաժանումը:
- Որոշեցին՝** Ընդունել ի գիտություն 2022-2023 ուսումնական տարվա նախնական ժամաբաժանումը (կցվում է):

Մ/Մ նախագահ՝

Ռ. Շալունց

Ուսումնական գծով փոխստորեն՝

Ս. Ավանեսյան

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Առարկայական մեթոդական միավորման արձանագրությունների ամփոփման

2021-2022 ուսումնական տարվա ընթացքում Տարրական դասարանների մեթոդափափորումը գումարել է 11 հերթական նիստ, որոնց համար կազմվել է 11 արձանագրություն:

Տարրական դասարանների մեթոդափափորման նիստերի տվյալները՝ ստորև.

№	ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐԸ	ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՄՍԱԹԻՎԸ	ՔՆՆԱՐԿՎԱԾ ՕՐԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ՔԱՆԱԿԸ
1	1	30.08.2021թ.	6
2	2	30.09.2021թ.	3
3	3	27.10.2021թ.	4
4	4	16.11.2021թ.	5
5	5	24.12.2021թ.	6
6	6	05.01.2022թ.	6
7	7	10.02.2022թ.	5
8	8	22.03.2022թ.	9
9	9	20.04.2022թ.	6
10	10	11.05.2022թ.	9
11	11	22.06.2022թ.	8

Տարրական դասարանների մեթոդափափորման սույն արձանագրությունների մատյանը կազմված է 31 էջից:

Մ/Մ նախագահ՝

Ուսումնական զծով փոխսնօրեն՝

Ռ. Շալունց

Ս. Ավանեսյան

«22» հունիսի 2022թ.